ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

Նախագծերը մշակվել են ի կատարումն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 8.1-ին կետի, համաձայն որի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ պետք է ներկայացվեն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծեր:

Նախագծերը մշակվել են բնակչության կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավման և նրանց մատուցվող սոցիալական ծառայությունների պրոֆեսիոնալիզացիայի և որակի բարձրացման նպատակով՝ համապատասխանացնելով այդ նպատակի համար հարակից ոլորտները նույնպես:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Սոցիալական աջակցության ոլորտի բարեփոխումներն այն անհրաժեշտ նախապայմանն են, որոնցով կապահովվի թե՛ Հայաստանի Հանրապետության բնակիչներին հասցեական, արդյունավետ և ամբողջական սոցիալական աջակցության տրամադրումը, թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի արդյունավետ իրականացումը՝ հատկապես սոցիալ–տնտեսական բազմակի ճգնաժամերի առերեսման պայմաններում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

Յուրաքանչյուր սոցիալական պետություն ձևավորում է այնպիսի օրենսդրական դաշտ, որի շնորհիվ

սոցիալական աջակցության համակարգն ի վիճակի կլինի վաղ հայտնաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին, ճիշտ գնահատել վերջիններիս կարիքները, աջակցել բավարարելու այդ կարիքները, զարգացնելու այն հմտություններն ու կարողությունները, որոնք անձանց և ընտանիքներին անհրաժեշտ են ինքնաբավ կենսակերպ վարելու համար կամ կանխարգելել այդ իրավիճակում նրանց հայտնվելը: Ժամանակակից ճգնաժամերի պայմաններում սոցիալական աջակցության համակարգի հանդեպ պահանջներն են նաև արագ արձագանքի համար բավարար ճկունությունը և ճգնաժամերին արձագանքելու դիմակայունությունը:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ հասարակության հիմնական միավոր հանդիսացող ընտանիքի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են նպաստել ընտանեկան կյանքի տնտեսական, իրավական և սոցիալական պաշտպանվածությանն այնպիսի միջոցներով, ինչպիսիք են սոցիալական և ընտանեկան նպաստները, ֆիսկալ միջոցառումները, ընտանեկան կացարանի տրամադրումը և այլ համապատասխան միջոցները:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող հիմնական օրենքը «Սոցիալական աջակցության մասին» օրենքն է, որն ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

- սոցիալական աջակցության ոլորտում տեղի են ունեցել պետական համակարգի մի շարք կառուցվածքային, գործառութային փոփոխություններ («Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97 օրենքի, Կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման, Վարչապետի 2021 թվականի փետրվարի 26-ի N 172-Լ որոշման հիման վրա՝ սոցիալական պաշտպանության հիմնական 4 ոլորտների գործառույթները 2021 թվականի ապրիլի 1-ից իրականացնում է մեկ մարմին՝ Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ նաև ՄՍԾ)՝ իր ստորաբաժանումների միջոցով),
- առկա են ոլորտներ, որոնք ներկա ճգնաժամերի առերեսման հետևանքով ենթակա են օրենսդրական կարգավորման (օրինակ, հրատապ արձագանք պահանջող իրավիճակների հետ կապված իրավահարաբերությունները և այլն) կամ վերանայման կամ զարգացման (օրինակ, սոցիալական աշխատանքի ոլորտը և այլն)՝

հրատապ է դարձել մշակել համալիր օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ հիմք ընդունելով սոցիալական աջակցության ոլորտում առկա խնդիրները, բացերը, ընթացիկ և նախատեսված բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության կառավարության առջև ծառացած խնդիրներն ու նպատակները, ներառյալ՝ միջազգային ստանդարտներին ու պարտավորություններին համապատասխան սոցիալական ծառայությունների համակարգը: Իսկ հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների ծավալը՝ առավել նպատակահարմար է ոչ թե լրացումներ և փոփոխություններ կատարել «Սոցիալական աջակցության մասին» օրենքում, այլ գործող օրենքը ճանաչել ուժը կորցրած և ընդունել նոր օրենք: Օրենսդրության ներդաշնակությունն ու համահունչությունն ապահովելու նպատակով՝ զուգահեռաբար համապատասխանեցման փոփոխություններ և լրացումներ պետք է կատարվեն նաև այլ օրենքներում:

Սոցիալական աջակցության ոլորտում առկա բացեր և խնդիրներն են՝

✔ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի կարգավորման առարկայի վերանայման անհրաժեշտությունը.

✔ «Սոցիալական աջակցության մասին» օրենքում օգտագործվող որոշ հասկացությունների վերանայման («կյանքի դժվարին իրավիճակ», «ընտանիք» և այլն), ինչպես նաև դրանց ընդլայնման անհրաժեշտությունը («սոցիալական աշխատանքի սուպերվիզիա», «անօթևան», «սոցիալական պաշտպանություն» և այլն).

✔ Սոցիալական աջակցության ոլորտի ծառայությունների դասակարգման տեսական բնույթը, ինչն իրավակիրառ տեսանկյունից ոչ նպատակահարմար է, թվարկված սոցիալական ծառայությունների տեսակների սահմանափակությունը և դրանք ընդլայնելու անհրաժեշտությունը.

✔ Սոցիալական պաշտանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միասնականության ապահովման իրավական հիմքերի բացակայությունը, միաժամանակ վարչական այլ շտեմարանների հետ փոխգործելիության բացակայությունը.

✔ Սոցիալական աջակցության ոլորտում առկա դերակատարների միջև հարաբերությունների իրավակարգավորումների բացը և գործնական իրողությանն անհամապատասխանությունը, ինչը նշանակում է՝ առկա է նոր դերակատարների սահմանման անհրաժեշտությունը և բոլոր դերակատարների լիազորությունների, դրանց հարաբերակցության, համագործակցության ձևերի հստակեցման անհրաժեշտությունը.

✔ Սոցիալական, այդ թվում՝ միջգերատեսչական, համագործակցության մեխանիզմերի և դրանց կառավարման հիմքերի բարելավման անհրաժեշտությունը.

✔ Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի զարգացման հետ առնչվող բաղադրիչների հստակեցման ու վերանայման անհրաժեշտությունը.

✔ Հայաստանի Հանրապետությունում ընտանիքի անապահովության գնահատման՝ որպես կարիքի հիմքով տարբեր սոցիալական ծառայությունների տրամադրման առնացքային համակարգի հասցեականության և արդյունավետության բավարար մեխանիզմների բացակայությունը.

✔ Հրատապ օգնության ածանցյալությունն ընտանիքի անապահովությամբ պայմանավորված նպաստից և դրա անհամապատասխանությունը հրատապ արձագանք պահանջող իրավիճակների դեպքում արագ արձագանքի պահանջներին.

✔ Սոցիալական աջակցությունն առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և համաձայնության տրամադրելու դեպքերի ոչ սպառիչ թվարկումը.

✔Սոցիալական աջակցության ոլորտում պրոֆեսիոնալ աշխատուժի ոչ բավարար մակարդակը և պահանջների հստակության բացը՝ սոցիալական աշխատողին, սոցիալական սատարողին ներկայացվող պահանջների վերանայման և սոցիալական աշխատանքի, սոցիալական աշխատողների երաշխիքների, մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման նպատակով նրանց

հավաստագրման, էթիկական կանոնագրքի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը.

✔ Տեղական ինքնակառավարման մարմիններում սոցիալական աշխատանքի և սոցիալական ծառայությունների զարգացման, համայնքային սոցիալական ծրագրերի իրականացման խթանիչների բացերը լրացնելու և հստակեցնելու անհրաժեշտությունը.

✔ Ռազմական, արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակներում, այդ թվում նաև անձի կյանքին, առողջությանը վտանգ սպառնացող առանձին դեպքերում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման բացակայությունը.

✔ Սոցիալական աջակցության ոլորտի ծառայությունների տրամադրման և սոցիալական աշխատանքի վերահսկողության, մոնիթորինգի, գնահատման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման բացակայությունը և այլն:

1.2. Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Սոցիալական աջակցության ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով մշակվել ՝ «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի նախագիծը և դրանից բխող մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը՝ նպատակ հետապնդելով կատարելագործել սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող իրավական դաշտը: Մասնավորապես մշակվել են հետևյալ իրավական ակտերի նախագծերը՝

- «Սոցիալական աջակցության մասին» օրենքի նախագիծը.
- ««Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Զբաղվածության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Համայնքային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Տարածքային կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● ««Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● ««Բարեգործության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● «««Պետական նպաստների մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● ««Ոստիկանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը.

● «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Այսպիսով, նախագծի ընդունումը կնպաստի այն օրենսդրական բացերի լրացմանը, որոնք ներկայումս առկա են սոցիալական աջակցության ոլորտում:

1.3. Ուսումնասիրված միջազգային փորձը և առաջարկվող կարգավորման բնույթը

- **<u>Միջազգային փորձ</u>**

Վերը նշված խնդիրներին համապարփակ լուծում տալու նպատակով՝__ ուսումնասիրվել են Ռուսաստանի[1], Բելառուսի[2], Մոլդովայի[3], Ղազախստանի[4], Լիտվայի[5], Լատվիայի[6], Էստոնիայի[7], Վրաստանի[8], Ռումինիայի[9], Բուլղարիայի[10], Գերմանիայի[11], Իսլանդիայի[12], Խորվաթիայի[13], Մոնտենեգրոյի[14], Ֆինլանդիայի[15], Նորվեգիայի[16], Մեքսիկայի[17], Չիլիի[18], Բրազիլիայի[19] սոցիալական

---

[1] http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_23735/ , http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_156558/ , http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_41647/

[2] http://trudgrodno.gov.by/wp-content/uploads/2018/03/%D0%97%D0%90%D0%9A%D0%9E%D0%9D-%D0%A0%D0%95%D0%A1%D0%9F%D0%A3%D0%91%D0%9B%D0%98%D0%9A%D0%98-%D0%91%D0%95%D0%9B%D0%90%D0%A0%D0%A3%D0%A1%D0%AC-%D0%BE-%D1%81%D0%BE%D1%86.%D0%BE%D0%B1%D1%81%D0%BB%D1%83%D0%B6%D0%B8%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B8.pdf

[3] http://old.mmpsf.gov.md/docs/legi/zacon_547_ru.pdf

[4] https://online.zakon.kz/Document/?doc_id=30369331&pos=3;-106#pos=3;-106 , https://kodeksy-kz.com/ka/o_gos_sotsialnyh_posobiyah_po_invalidnosti.htm

[5] https://e-seimas.lrs.lt/portal/legalActPrint/lt?jfwid=5v2xfg5w0&documentId=TAIS.422369&category=TAD , https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/f85b15f062c011e5b316b7e07d98304b

[6] https://mvd.riga.lv/na/Socpalidziba%20Socuslugi.pdf

[7] https://www.juristaitab.ee/sites/www.juristaitab.ee/files/elfinder/ru-seadused/%D0%97%D0%90%D0%9A%D0%9E%D0%9D%20%D0%9E%20%D0%A1%D0%9E%D0%A6%D0%98%D0%90%D0%9B%D0%AC%D0%9D%D0%9E%D0%9C%20%D0%9E%D0%91%D0%95%D0%A1%D0%9F%D0%95%D0%A7%D0%95%D0%9D%D0%98%D0%98_ve_01.01.17.pdf , https://www.riigiteataja.ee/en/eli/505022016003/consolide

[8] https://matsne.gov.ge/en/document/view/23098?publication=9

[9] https://www.global-regulation.com/translation/romania/3756378/law-no.-292-of-december-20-2011-social-assistance.html

[10] https://www.mlsp.government.bg/eng/legislation-1?fbclid=IwAR3suMNA89uEDS7a-w49CFdImGb9On1mYYr5vs2C0YKE2_3-1FkSjox20tA

[11] http://www.gesetze-im-internet.de/sgb_12/ ,

[12] https://www.government.is/lisalib/getfile.aspx?itemid=aaa6eabe-52b1-11e8-9428-005056bc4d74 , https://www.government.is/media/velferdarraduneyti-media/media/acrobat-enskar_sidur/The-Municipalities-Social-Services-Act-No-40-1991-with-subsequent-amendments.pdf

[13] https://mvep.gov.hr/UserDocsImages/files/file/dokumenti/prevodenje/zakoni/zakon-o-socijalnoj-skrbi-nn-157-13-eng.pdf

[14] http://ilo.org/dyn/natlex/docs/MONOGRAPH/95155/134947/F1245757045/MGO95155%20Eng.pdf

[15] https://stm.fi/en/income-security/social-assistance

[16] https://lovdata.no/dokument/NL/lov/2009-12-18-131/KAPITTEL_4#%C2%A729

աջակցության ոլորտը կարգավորող հիմնական օրենքները: Ստորև կներկայացվեն ուսումնասիրված միջազգային փորձից որոշակի իրավակարգավորումներ, որոնք հիմք են հանդիսացել օրենսդրական փաթեթում ներառվող որոշ փոփոխություններն ու լրացումներն իրականացնելու համար:

- **<u>Օրենքի կառուցվածք և սահմանվող հասկացություններ</u>**

Մի շարք պետություններում սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող օրենքը կարգավորում է ընդհանուր բնույթի հարաբերություններ, սահմանում է սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող օրենքի հասկացությունները, որոնցով շեշտադրում է խոցելիությամբ կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կապակցությամբ պայմանավորված սոցիալական ծառայությունների ստացման անհրաժեշտությունն այնպես, որպեսզի ապահովվեն վերջիններիս՝ սեփական կարիքներն ինքնուրույն բավարարելու և հասարակական կյանքին ակտիվ մասնակցելու կարողությունները՝ հաշվի առնելով, որ հասարակությունում խոցելիությունը նախապես ծագած ռիսկային կամ խտրականության իրավիճակների հետևանք է: «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի նախագծում համապարփակ ներառվել են բոլոր այդ հասկացությունները, քանի որ դրանք կիրառվելու են նաև ՀՀ օրենսդրության մեջ:

- **<u>Սոցիալական աջակցության մասին օրենքի առարկան</u>**

Ուսումնասիրելով մի շարք պետությունների սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող հիմնական օրենքները՝ կարելի է եզրակացնել, որ սոցիալական աջակցությունն իր մեջ հիմնականում ընդգրկում է առանձին նպաստների կամ դրամական օգնության տեսակներ և այլ սոցիալական ծառայություններ (խորհրդատվություն, կացարանով ապահովում, խնամք և այլն): Կենսաթոշակները և բժշկասոցիալական ծառայությունները չեն համարվում սոցիալական աջակցության տարր, այլ կազմում են ընդհանուր սոցիալական պաշտպանության բաղկացուցիչ մաս: Իսկ զբաղվածության ծառայությունները սոցիալական աջակցության անբաժանելի տարր են համարվում: Օրինակ, որոշ երկրների օրենքներում, լիազոր մարմիններին և քաղաքացիներին պարտավորեցվում է համագործակցություն, որպեսզի աշխատունակ անձինք ընդգրկվեն աշխատանքի մեջ (Խորվաթիա, Մոնտենեգրո): Ֆինլանդիայի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի համաձայն՝ 17-64 տարեկան աշխատանք փնտրող գործազուրկ անձինք պարտավոր են գրանցվել համապատասխան մարմնում, եթե՝ չեն աշխատում, չեն սովորում, չնայած հիվանդության առկայության՝ աշխատունակ են և այլն: Նույն օրենքի 10-րդ կետի համաձայն՝ եթե անձը հրաժարվում է առաջարկվող աշխատանքից, ապա իր մասով սոցիալական աջակցությունը նվազում է (20-40 տոկոսի չափով): Սոցիալական աջակցությունն այսպիսով դիտվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համատեքստում և մեկտեղում է հիմնական նպատակին՝ ընտանիքների ինքաբավության հասնելուն միտված ծառայությունները: Համանման մոդել ընտրվել է նաև ՀՀ համար, որի առնչությամբ փոփոխություններ են իրականացվել ոչ միայն «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքի նախագծում, այլ նաև այլ օրենքներում:

- **<u>Օրենքի սկզբունքները</u>**

Սոցիալական աջակցության սկզբունքները գրեթե բոլոր ուսումնասիրված երկրներում ներառում են սոցիալական արդարության, քաղաքացիների իրավունքները հարգելու, սոցիալական

---

[17] https://www.diputados.gob.mx/LeyesBiblio/pdf/LGDS.pdf

[18] https://siteal.iiep.unesco.org/sites/default/files/sit_accion_files/siteal_chile_0588.pdf , https://siteal.iiep.unesco.org/sites/default/files/sit_accion_files/siteal_chile_0604.pdf

[19] http://www.planalto.gov.br/ccivil_03/leis/l8742compilado.htm

ծառայությունների հասանելիության, սոցիալական ծառայություններ ստացողի ընտրության ազատության կամ կամավորության, անձնական տվյալների պաշտպանության, կարիքների հիման վրա հասցեական ծառայությունների տրամադրման և այլ սկզբունքները: Միասնական սկզբունքներ նախատեսված են նաև ՌԴ, Մոլդովայի, Ղազախստանի, Լիտվայի, Էստոնիայի, Վրաստանի, Բուլղարիայի և այլ պետությունների ոլորտային օրենսդրություններում, ինչին համահունչ փոփոխություններ են նախատեսվել նաև ՀՀ օրենսդրությունում՝ ներկայացվող սկզբունքները սոցիալական աջակցության և ծառայության առանձին տեսակների համատեքստում որպես ելակետային կիրառելու համար:

- **<u>Սոցիալական աջակցության ոլորտում դերակատարների լիազորությունները</u>**

Սոցիալական աջակցության ոլորտի հիմնական դերակարատարները տարբեր պետություններում տարբեր են, սակայն հիմնականում տարանջատվում են պետական և համայնքային մակարդակների:

Իսլանդիայի «Համայնքային սոցիալական ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների իրականացման նկատմամբ կառավարումն իրականացնում է լիազոր նախարարությունը, որը պետք է ապահովի, որպեսզի վերջիններս մատուցեն օրենսդրությամբ նախատեսված սոցիալական ծառայություններ: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքները (համայնքի խորհուրդը՝ municipal council) պատասխանատու են իրենց ամբողջ տարածքում մատուցվող սոցիալական ծառայությունների համար:

Ֆինլանդիայի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի համաձայն՝ Ֆինլանդիայում սոցիալական աջակցությունն ընդգրկում է հիմնական սոցիալական օգնությունը, լրացուցիչ սոցիալական և կանխարգելիչ սոցիալական աջակցությունները: Հիմնական սոցիալական օգնությունը վճարում է պետական հաստատության միջոցով, իսկ մյուս երկուսը՝ համայնքները:

Նորվեգիայի «Սոցիալական ծառայությունների մասին» օրենքի 3-րդ, 7-րդ, 29-րդ հոդվածների համաձայն՝ համայնքները պատասխանատու են որակավորման ծրագրի իրականացման, տնային պայմաններում խնամքի և համապատասխան հաստատություններում մատուցվող ծառայությունների համար, որոնց համար պահանջվող ծախսերը փոխհատուցվում են համայնքի բյուջեից:

Բրազիլիայի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի համաձայն՝ սոցիալական աջակցության քաղաքականություն մշակողը Սոցիալական զարգացման և սովի դեմ պայքարի նախարարությունն է: Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պարտավոր է՝

1) համայնքերին տրամադրել ֆինանսական աջակցություն օրենքով սահմանված սոցիալական աջակցության վճարման համար.

2) համայնքի հետ միասին ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ արտակարգ իրավիճակներում.

3) իրականացնել մոնիթորինգ, գնահատել սոցիալական աջակցության քաղաքականությունը, տրամադրել խորհրդատվություն համայնքներին և այլն:

Իր հերթին, համայնքը պարտավոր է՝

1) վճարել օրենքով նախատեսված նպաստները, ներառյալ՝ ծննդյան և թաղման նպաստը.

2) իրականացնել աղքատության դեմ պայքարի ծրագրերը.

3) մատուցել օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ.

4) իրականացնել մոնիթորինգ՝ իր իրավասությունների շրջանակում և այլն:

Էստոնիայի օրենսդրության համաձայն՝ սոցիալական ծառայությունների մատուցման, սոցիալական նպաստների, անհապաղ սոցիալական օգնության և այլ տեսակի օգնության տրամադրումը տեղական ինքնակառավարման միավորի պարտականությունն է՝ ըստ բնակչության ռեգիստրում գրանցված անձի բնակության վայրի:

Ակնհայտ է, որ բոլոր երկրները կարգավորում են երկու հիմնական դերակատարների՝ համայնքի և կենտրոնացված կառավարության դերակատարումները և լիազորությունների ու գործառույթների բաշխումը, ինչպես նաև դրանց միջև համագործակցության սխեմաները: Իսկ կոնկրետ կարգավորումներն ունեն տարաբնույթ դրսևորումներ՝ պատմականորեն ձևավորված հանգամանքներով և քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված:

Համանման մոտեցումը կիրառելի է նաև ՀՀ-ի համար, և սոցիալական աջակցության օրենսդրության բարեփոխումն անհնարին է առանց տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխման:

- **<u>Սոցիալական աշխատանքի հետ կապված իրավակարգավորումները</u>**

Միջազգային պրակտիկայում սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող օրենքները նաև սահմանում են սոցիալական աշխատողի կամ սոցիալական աշխատանքի վերաբերյալ կարգավորումները: Մասնավորապես, նման կարգավորումներ առկա են Մոլդովայի, Ղազախստանի, Լատվիայի, Էստոնիայի, Ռումինիայի և այլ պետությունների ոլորտային օրենսդրություններում: Որոշ դեպքերում (օրինակ՝ Վրաստան, Ուկրաինա, Արգենտինա) առկա են սոցիալական աշխատանքի մասին առանձին օրենքներ, որոնք սակայն չեն նախատեսում այնպիսի կարգավորումներ, որոնք հնարավոր չէ սահմանել սոցիալական աջակցության մասին օրենքների ներքո: Հետևաբար, ՀՀ-ում սոցիալական աշխատանքի առնչությամբ կարգավորումները նույնպես իրականացվելու են «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքով, որում մանրամասնվելու են ոչ միայն սոցիալական աշխատանքի, դրա հատկանիշների և նպատակների, այլ նաև սոցիալական աշխատողի իրավունքների, պարտականությունների, սոցիալական երաշխիքների վերաբերյալ կարգավորումները:

- **<u>Սոցիալական ծառայությունների տրամադրման չափանիշներ</u>**

Բուլղարիայի օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր սոցիալական ծառայություն ունի իր կանոնակարգումը, որտեղ պարտադիր նշվում են.

1. սոցիալական ծառայությունների որակի չափանիշները.
2. սոցիալական ծառայությունների որակի չափանիշներին համապատասխանության չափորոշիչները.
3. սոցիալական ծառայություններ մատուցողների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարելավման հիմնական սկզբունքները.
4. սոցիալական ծառայությունների որակի վերահսկման մեթոդները.
5. սոցիալական ծառայությունների որակի և արդյունավետության վերահսկման, մոնիթորինգի և գնահատման կարգերը: Որակի նկատմամբ հսկողությունն իրականացնում է նախարարության կազմում գործող գործակալությունը, իսկ համայնքն իրականացնում է ընթացիկ վերահսկողություններ:

Որոշ երկրներ սոցիալական ծառայությունների որակի չափանիշների հաստատումը վերապահում են կառավարություններին կամ կառավարության անդամին: Երկրորդ տարբերակն

առավել համահունչ է նաև ՀՀ իրավական համակարգին, որտեղ ենաօրենսդրական ակտերով հնարավոր է մանրամասնել չափորոշիչները:

- **<u>Հիմնական սոցիալական ծառայությունները</u>**

Հիմնական սոցիալական ծառայությունների շարքում են՝

✔Դրամական սոցիալական օգնության տեսակներն են՝

1) սոցիալական նպաստը.

2) կոմունալ և բնակվարձի ծախսերի, տաք և սառը ջրի վարձի հատուցումը (Լիտվա).

✔ գնահատված կարիքի հիմքով նպաստը (Խորվաթիա,Մոնտենեգրո և այլն).

✔ սոցիալական խորհրդատվություն, ֆինանսական աջակցություն, տնային պայմաններում սոցիալական աջակցություն, դեռահասների համար մատուցվող ծառայություններ, տարեցների համար մատուցվող ծառայություններ, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատուցվող ծառայություններ, կացարանով ապահովում, գործազուրկ անձանց հաշվառում և զբաղվածության ապահովում և այլն (Իսլանդիա).

✔ երաշխավորված նվազագույն նպաստ, բնակարանային նպաստ, միանվագ նպաստ, աշխատանք փնտրողի նպաստ և այլն, սոցիալական ծառայություններ՝ սկզբնական սոցիալական ծառայություն (նախնական ուսումնասիրություն, կարիքների գնահատում և այլն), խորհրդատվություն և աջակցություն, հոգեբանական աջակցություն, վաղ միջամտություն, դաստիարակության և կրթության ծրագրերում ընդգրկվելու աջակցություն, ցերեկային խնամք, կացարանով ապահովում և այլն (Խորվաթիա).

✔ կենսաապահովման նպաստ, վերաինտեգրման նպաստ, խնամատարության նպաստ, չափահաս անձի ընտանեկան խնամքի նպաստ, ոչ դրամական սոցիալական օգնություն, սոցիալական փաթեթ (Վրաստան).

✔ ծառայություններ, դրամական նպաստներ, բնաիրային օգնություն (Գերմանիա):

Հիմք ընդունելով վերոնշյալ միջազգային փորձը՝ նախագծով հստակեցվել են որոշակի սոցիալական ծառայությունների բովանդակությունը և լրացվել է նոր սոցիալական ծառայություններով:

2. Կարգավորման առարկան

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերով՝

1. <u>Վերանայվել են</u> «կյանքի դժվարին իրավիճակ», «ընտանիք», «սոցիալական աջակցություն», «հիմնական պահանջմունքներ», «բռնություն», «ընտանիքի սոցիալական գնահատում» և այլ հասկացությունները: Սահմանվել են «անօթևան», «որոշակի բնակության վայր չունեցող», «համայնքային սոցիալական ծրագիր», «հրատապ արձագանք պահանջող իրավիճակ», «սոցիալական աշխատանքի սուպերվիզիա», «սոցիալական աջակցության ծրագիր», «սոցիալական բնակարանային ֆոնդ», «սոցիալական պաշտպանություն» և այլ նոր հասկացությունները:

2. <u>Հստակեցվել է «Սոցիալական աջակցության մասին» օրենքի առարկան.</u> օրենքի նախագծով կարգավորվում են միայն սոցիալական աջակցության ոլորտին վերաբերող հարաբերությունները:

3. <u>Վերանայվել և հստակեցվել են սոցիալական աջակցության ոլորտի հիմնական դերակատարների լիազորությունները.</u> մասնավորապես,

1) Կառավարությանը վերապահվել է լիազորություն սահմանել սոցիալական աջակցության ծրագրեր կամ այլ սոցիալական ծառայություններ՝ հրատապ արձագանք պահանջող իրավիճակի

արդյունքում ծագած հետևանքները վերացնելու կամ մեղմացնելու նպատակով՝ հաշվի առնելով ժամանակակից ճգնաժամերի հաճախադեպությունը և դրանց արագ և ճկուն արձագանքելու անհրաժեշտությունը.

2) Լիազոր պետական մարմնին վերապահվել են հետևյալ լիազորությունները՝

- սահմանել սոցիալական աջակցության ոլորտի որոշ սոցիալական ծառայությունների տրամադրման նվազագույն չափորոշիչները.

- հաստատել սոցիալական աշխատանքի սուպերվիզիայի իրականացման կարգը, պայմանները, սուպերվիզորներին ներկայացվող պահանջները և սուպերվիզորների հավաստագրման կարգը.

- հաստատել մշտադիտարկման և գնահատման կարգերը, պայմաններն ու մեթոդաբանությունը և այլն:

3) Միասնական սոցիալական ծառայություն. օրենքի Նախագծում կարգավորվում են միայն ՄՍԾ-ին սոցիալական աջակցության ոլորտում վերապահված լիազորությունները, մասնավորապես անապահավության գանահատումը և սոցիալական դեպքի վարումը, իսկ նրան վերապահված մնացած լիազորությունները սահմանվել են համապատասխան այլ օրենքներում.

4) Համայնքի ղեկավարին վերապահվել են հետևյալ սեփական լիազորությունները. օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել կամ կազմակերպել սոցիալական աջակցության տրամադրումը՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված և սոցիալական աջակցության ոլորտում պետական լիազոր մարմնի կողմից հաստատված ուղեցույցի համաձայն մշակված համայնքային սոցիալական ծրագրերի շրջանակում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին կամ ընտանիքին կարող է տրամադրվել «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված ցանկացած սոցիալական ծառայություն, բացառությամբ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված նպաստների կամ այլ դրամական օգնությունների և այլն:

Համայնքի ղեկավարին սույն բնագավառում վերապահվել է իրականացնել պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) իրականացնել սոցիալական պատրոնաժի տրամադրումը.

2) իրականացնել «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված հրատապ արձագանք պահանջող իրավիճակի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) անձանց սոցիալական կարիքների նախնական գնահատում և օրենսդրությամբ սահմանված կարգով ու դեպքերում սոցիալական աջակցության տրամադրումը:

4. <u>Տարբերակվել և սահմանվել են համագործակցության ու կոնկրետ դեպքի շուրջ ձևավորվող աջակցող ցանցերը:</u>

5. <u>Սահմանվել են անձնական տվյալների մշակման հետ կապված իրավակարգավորումներ և բանկային գաղտնիք համարվող տվյալների՝ երրորդ կողմի տրամադրման սահամանափակումներ:</u>

6. <u>Վերանայվել է ընտանիքի սոցիալական գնահատման գործընթացը, սահմանվել են ընտանիքի անապահովության գնահատման հիմնական դրույթները:</u>

7. <u>Սահմանվել և կարգավորվել են սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի հետ կապված իրավահարաբերությունները:</u>

8. Վերանայվել է սոցիալական աջակցության ոլորտի ծառայությունների դասակարգումը, սահմանվել են սոցիալական ծառայությունների նոր տեսակներ, վերանայվել են գործող սոցիալական ծառայությունների հետ կապված իրավահարաբերությունները, իսկ որոշ սոցիալական ծառայություններ հանվել են: Մասնավորապես,

-լրացվել են հետևյալ սոցիալական ծառայությունները՝ ընտանիքի կենսապահովման կայունացման օգնությունը, սոցիալ-հոգեբանական օգնությունը, բնակարանային կոմունալ ծառայությունների վճարումների նվազեցումը կամ փոխհատուցումը կամ վառելանյութի ձեռքբերման համար հատուցումը, սոցիալական պատրոնաժը, ինտեգրմանը կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը, կենցաղային օգնությունը.

- վերանայվել են հետևյալ սոցիալական ծառայությունները՝ իրավական օգնությունը, կացարանով ապահովումը, սոցիալ-վերականգնողական օգնությունը, բնաիրային օգնությունը, խնամքը.

-գործող օրենքում առկա հետևյալ սոցիալական ծառայությունները հանվել են՝ կենսաթոշակների նշանակումը և վճարումը, բժշկասոցիալական փորձաքննության ծառայությունների տրամադրումը և այլն: Հետևաբար նաև անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ «Զբաղվածության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին», «Պետական նպաստների մասին» օրենքներում:

9. Վերանայվել է սոցիալական աջակցության տրամադրման ընթացակարգը, սպառիչ սահմանվել են այն դեպքերը, երբ սոցիալական աջակցություն տրամադրելու համար պարտադիր չեն անձի կամ օրինական ներկայացուցչի դիմումը և համաձայնությունը:

10. Սահմանվել է սոցիալական աջակցության տրամադրման նոր սուբյեկտ՝ իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը:

11. Սահմանվել է սոցիալական ծառայությունների տրամադրումը նաև աջակցության բարտի միջոցով:

12. Վերանայվել են սոցիալական աշխատողին և սոցիալական սատարողին ներկայացվող պահանջները, ներմուծվել է նրանց հավաստագրման ինստիտուտը: Նշվածի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ Աշխատանքային օրենսգրքում: Ընդ որում հավաստագրման պահանջը չի տարածվելու քաղաքացիական կամ համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատողների և սոցիալական սատարողների վրա:

13. Սահմանվել են սոցիալական աշխատողի հիմնական գործառույթները, վերանայվել են սոցիալական աշխատողի իրավունքները և պարտականությունները, գործունեության երաշխիքները, սոցիալական աշխատողի մասնագիտական կանոնագիրքը: Նշվածի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն «Ոստիկանության մասին» օրենքում:

14. Կարգավորվել են սոցիալական աջակցության վերահսկողության, մշտադիտարկման և գնահատման հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես, պետական վերահսկողության գործառույթը վերապահվել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: Նշվածի արդյունքում նաև անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ և լրացումներ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում: Սահմանվել են դրույթներ

հասարակական կազմակերպությունների կողմից շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպություններում մշտադիտարկման վերաբերյալ:

15. Սահմանվել է, որ 2029թ. հունվարի 1-ից սոցիալական աշխատող կարող է հանդիսանալ միայն սոցիալական աշխատանքի բարձրագույն կրթություն ունեցող կամ հոգեբանություն, սոցիալական մանկավարժություն, հատուկ մանկավարժություն, սոցիոլոգիա, մարդկային ռեսուրսների կառավարման բարձրագույն կրթություն ունեցող և օրենսդրության այլ պահանջներին բավարարող անձը:

16. Պայմանավորված 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում հայտարարված և՛ ռազմական, և՛ արտակարգ դրություններով՝ առանձին կարգավորվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում սոցիալական աջակցության տրամադրման առանձնահատկությունները և լիազորությունները:

17. Իրականացված փոփոխությունների արդյունքում նաև հստակեցվել և կարգավորվել են սոցիալական աջակցության հետ կապված հարկային և դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրության որոշակի դրույթներ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ սույն փաթեթի ընդունման դեպքում անհրաժեշտ է լինելու մշակել շուրջ 40 ենթաօրենսդրական իրավական ակտեր: Ուստի, սույն փաթեթի ընդունման դեպքում հնարավոր է հետագայում անհրաժեշտություն առաջանա որոշակի փոփոխություններ իրականացնել ընդունված օրենքներում՝ հաշվի առնելով մշակվելիք ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՅՈՒՆԻՍԵՖԻ փորձագիտական խմբի հետ համատեղ:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել սոցիալական աջակցության ոլորտի իրավական դաշտը, կարգավորել որոշակի հարաբերություններ, որոնք կարգավորված չեն, իսկ որոշակի կարգավորված հարաբերություններում կատարել փոփոխություններ:

Նախագծերի ընդունման դեպքում կհստակեցվեն «Սոցիալական աջակցության մասին» օրենքի առարկան, սոցիալական աջակցության ոլորտի դերակատարների լիազորությունները, կբարելավվի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը, կսահմանվեն նոր սոցիալական ծառայությունների տեսակներ, կբարելավվեն արդեն իսկ տրամադրվող սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված իրավակարգավորումները, կկարգավորվեն հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված առանձնահատկությունները, կսահմանվեն սոցիալական աշխատողների հիմնական գործառույթները, կվերանայվեն նրանց իրավունքները և պարտականությունները, կսահմանեն նրանց գործունեության երաշխիքները, կսահմանվեն սոցիալական աշխատողների և սոցիալական սատարողի համար նոր պահանջներ, կպահանջվի ոչ դրամական սոցիալական ծառայությունների որակի չափորոշիչների և դրանց նկատմամբ, ինչպես նաև սոցիալական աջակցության ոլորտի բոլոր ծառայությունների նկատմամբ վերահսկողության, մշտադիտարկման և գնահատման կարգերի սահմանումը և այլն:

Նախագծերի ընդունման դեպքում անհրաժեշտ կլինի կատարել մի շարք ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ, ինչպես նաև՝ ընդունել նորերը: Արդյունքում իրավակարգավորումները թույլ կտան, որպեսզի սոցիալական աջակցության ոլորտում ավելանան մասնավոր դերակատարները, ոլորտը դառնա ավելի ճկուն արձագանքող, միաժամանակ դիմակայուն և զարգացած:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերը մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4.6-րդ կետի առաջին պարբերության պահանջից: Այն է՝ սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների և հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են:

6. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին

Սույն նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում: Միաժամանակ, լրացուցիչ միջոցների պահանջը կարող է առաջանալ լրացուցիչ ծառայությունների նեդրման, սոցիալական ծառայությունների վերահսկման, մոնիթորինգի և գնահատման համակարգերի գործարկման ժամանակ, որոնք կհաշվարկվեն և կհիմնավորվեն համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակման փուլում: